

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱԻԱՆՑ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝
ՊԵՏՈՒԹԻՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ
ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ՝¹**

ԳԱՍՊԱՐ ՏԷՐՏԷՐԵԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Լիրանանի Հայոց վայելած «Անձնական Իրաւանց Կարգավիճակ»ի իսկութեան ծանօթանալու, ու զայն շօշափելիօրէն պատկերացնելու Համար անհրաժեշտ է արագ ակնարկ մը նետել այդ կարգավիճակի պատմական արմատներուն վրայ, որոնք ծնունդ տուին անոր եւ կերպարանաւորեցին զայն, որպէս՝ յատուկ եւ ինքնուրոյն կարգավիճակ: Այս կարգավիճակը ընդհանրապէս անհամատեղելի է պետութեան գերիշխանութեան անրաժանելիութեան եւ անփոխանցելիութեան (indivisible et inalienable - անտրոհելի եւ անօտարելի) սկզբունքին հետ:

Այս կարգավիճակը չունի բոլորին կողմէ ընդունուած եւ համաձայնեցուած սահմանում մը: Պայմանականօրէն կրնանք տալ հետեւեալ սահմանումը.- Անձնական իրաւանց կարգավիճակ ճանչցող պետութիւնը՝ իր վեհապետութեան/գերիշխանութեան առանձնաշնորհումներէն մաս մը - եկեղեցական, վարչական, տնտեսական, կենցաղային ու կրթական մարգերու մէջ - կը փոխանցէ կրօնական հաւաքականութեան/հաւաքականութիւններու, այսպիսով՝ ճանաչում շնորհելով անոնց կրօնական կենցաղային ինքնավարութեան՝ պետութիւն-եկեղեցի փոխյարաբերութիւնը պահելով հանդերձ ուղղահայեաց գիծի վրայ:

Սխալ պիտի ըլլար այս կարգավիճակը նկատել վերապրուկ մը՝ աստուածպետական վարչակարգէ մը (Régime théocratique) ժառանգուած: Սխալ պիտի ըլլար նաեւ՝ այս կարգավիճակին ծագումը փնտռել Օսմանեան Կայսրութեան միջնաբերու համակարգին մէջ, որովհետեւ այդ համակարգը ունէր աւելի ազգային քան թէ կրօնական բնոյթ, մինչ Լիրանանի մէջ ան գերազանցապէս կրօնական է:

Աւելի երկարաշունչ պրպտումը մեզ կը տանի մինչեւ արարական առաջին արշաւանքներու շրջանը, երբ յաղթական-տիրակալ իսլամ տարրը եւ պարտեալ-հպատակեալ ոչ-իսլամ ժողովուրդները հարկադրուած էին ապրիլ միեւնոյն պետութեան սահմաններուն մէջ, ինչ որ անհրաժեշտ կը դարձնէր ուղղահայեաց գիծի վրայ ապրելակերպի մը, համա-

կերպութեան տարազի մը (modus vivendi) որդեգրումն ու հաստատումը՝ եթէ յաղթող-տիրակալը որոշած չէր բնաջնջել կամ բռնահանել բնիկ ժողովուրդը: Ասիկա՝ հարկադրանքն էր իսլամի ուսմունքին, որ սկզբունքով կ'արգիլէ բռնի կրօնափոխութիւնը لا اكراد في الدين
 եւ քրիստոնէութիւնն ու մովսիսականութիւնը կը դասէ իսլամի կարգին՝ որպէս միաստուածեան եւ Ս. Գիրք ունեցող اهل الكتاب
 կրօններ: Ասիկա հարկադրանքն էր նաեւ՝ տնտեսաքաղաքական անհրաժեշտութեան մը: Քաղաքական՝ քանի որ քրիստոնեայ Բիւզանդիոնը դաժանօրէն կը հալածէր Արեւելքի ազգային եկեղեցիները, զորս սիրաշահելու համար Բիւզանդիոնի մրցակից եւ սահմանակից արաբական խալիֆայութիւնը հարկ կը նկատէր Արեւելքի ազգային եկեղեցիներուն հանդէպ ցուցարբերել կրօնական հանդուրժողութիւն: Իսկ տնտեսական՝ քանի որ նուաճողները անմիջականօրէն պէտք ունէին տեղաբնակներու գիտութեան, արհեստաւորներուն, աշխատուժին եւ ... տուրքերուն: Այս տրամախոհական հանդուրժողութեան գետնին վրայ է որ սաղմնաւորուեցաւ անձնական իրաւանց կարգավիճակը:

Այստեղ կ'անդրադառնանք լիբանանահայոց վայելած անձնական իրաւանց կարգավիճակի ծագումին, զարգացման հանգրուաններուն եւ ներկայիս կիրարկուող դրութեան:

ԾԱԳՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ

Լիբանանահայոց ներկայիս վայելած անձնական իրաւանց կարգավիճակը սկիզբ առած է արաբական արշաւանքներու շրջանին, երբ խալիֆան՝ իր հրամանագրերով, հպատակ հայոց կրօնա-կենցաղային ազատութիւնը կը ճանչնար ու կը պաշտպանէր զանոնք, փոխարէնը՝ պահանջելով տուրքեր:

Այս կարգի հրամանագրերու եւ պայմանագրերու մասին լայն տեղեկութիւններ կը գտնուին Լէոյի Հայոց Պատմութիւն շարքի Բ. հատորին² եւ Օրմանեանի Ազգապատումի Ա. հատորին³ մէջ, ուր կը յիշուին՝ Դուինի,⁴ Գառնիի, Աշոցքի, Սիսականի, Կոզովիտի, Վայոց Ձորի, Նախիջեւանի եւ այլ քաղաքներու պայմանագրերն ու մասնաւորաբար՝ Օմար Բ. Խալիֆայի (իշխ. 717-720) եւ Յովհաննէս Կաթողիկոս Օձնեցի Իմաստասէրի (կթղ. 717-728) միջեւ կնքուած պայմանագրութիւնը⁵:

Այս հանդուրժողականութիւնն ու փոխադարձ պարտաւորութիւններու ճանաչման դրութիւնը իր գերագոյն աստիճանի տարագումը ստացաւ 732ին, երբ Մրուան Ոստիկան (689-750), Դուինի մէջ, Աշոտ

Բագրատունիին (իշխ. 732-748) տուաւ «իշխանութիւն պատրկութեան՝ ի վերայ աշխարհիս Հայոց հրամանաւ Հեշմայ [Ամիրապետին]»⁶:

Սակայն, այս բոլորը օրէնսդրական կամ սահմանադրական կայուն հիմնաքար մը չէին հանդիսանար Հայոց՝ յետագային վայելելիք կրօնակենցաղային ինքնավարութեան իրաւավիճակին համար: Այս իրաւավիճակին ամրագրումը՝ օրէնսդրական ակտով մը, Հայոց պիտի տային յաղթական օսմանցիները՝ Կ.Պոլսոյ գրաւումին (1452) յաջորդող տասնամեակի օրերուն մէջ: Այսպէս՝

ա- Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան հաստատումով է որ Հայոց անձնական իրաւանց կարգավիճակը ստացաւ (յարարերարար) կայուն օրինական հիմնաքար, երբ Ֆաթիհ Սուլթան Մեհմէտ Բ. (իշխ. 1444-1446, 1451-1481)՝ 1461ին Հայոց Փաթրիք (պատրիարք) նշանակեց Յովակիմ Եպիսկոպոսը (մահ. 1476?) եւ՝ Հայոց պատրիարքութեան տուաւ կրօնակենցաղային ու վարչական «ինքնավարութիւն» մը, որ նման էր յոյներու պատրիարքութեան եւ հրեաներու ռարունապետութեան տրուած «ինքնավարութեան» ց:

Անցողակի յիշենք՝ թէ հայ կաթողիկէները միայն 1831ին, եւրոպական միջնորդութեամբ, ճանաչուժ ստացան որպէս առանձին համայնք, իսկ բողոքական համայնքի (որուն անդամները հայեր եւ այլազգիներ էին) ճանաչումը եկաւ 1846ին: Մինչ այդ՝ բոլոր հայերը ենթակայ էին Հայոց պատրիարքարանին⁷:

Զուգահեռարար՝ 1836ին, ռուսահայութեան կրօնա-վարչական իրաւասութիւնները ճանաչուժ ստացան «Պոլոժենիա» կոչուող ցարական հրովարտակով⁸:

բ- 17 Մարտ 1863ի Ֆերմանով՝ «Տէր Սաատէթ էրմէնի Փաթրիքիինին ինթիխապը Պէյանընտա Տըր»⁹ (Նորին Վեհափառութիւն հայ պատրիարքին ընտրութեան կանոնադրութիւն) կոչուող, բայց հայերուս կողմէ «Ազգային Սահմանադրութիւն» յորջորջուած պետական ակտով եւ մասնաւորարար անոր 47րդ յօդուածով, հիմը կը դրուէր Հայոց դատաստանական ինքնավարութեան՝ անձնական իրաւանց (statut personnel) մարզին մէջ, եւ որ հիմնաքարը պիտի հանդիսանար Լիրանանի Հայոց անձնական իրաւանց կանոնին¹⁰: Երկու կայսերական ակտերու բաղդատութիւնը ցոյց պիտի տար՝ բացի անոնց ծննդոցի հիմնական տարրերութենէն, նաեւ այլ տարրերութիւններ, որոնք հետեւանքն են երկու փաստաթուղթերուն Եկեղեցիին հանդէպ ցուցարբրած տարրեր մօտեցումներուն: Մինչ «Պոլոժենիա»ն հայոց եկեղեցիին կը նայի որպէս զուտ եկեղեցական հաստատութիւն, կղերապետութիւն, «Ազգային Սահմանադ-

րութիւն»ը պատրիարքարանին կը նայի որպէս եկեղեցական եւ աշխարհական հաստատութիւն, որուն ժողովները կ'ընտրուին ժողովուրդին կողմէ, իսկ Պորհուրդները՝ ժողովուրդէն ընտրեալներու կողմէ¹¹: Այսպիսով, Հայ Առաքելական համայնքը կը ճանչցուի որպէս «անձնական իրաւունք վայելող համայնք»:

գ- 19 Յուլիս 1916ին, Երիտթուրք կառավարութեան հրատարակած «էրմէնի կաթողիկոսութեան վէ ֆաթրիքլիկի նիգամնամէսի» (հայ կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան կանոնադրութիւն) հրամանագրով¹², հիմնովին բովանդակագրկուեցաւ «Ազգային Սահմանադրութիւն»ը: Իսկ 2 Հոկտեմբեր 1917ին, Երիտթուրք կառավարութիւնը հրատարակեց ընտանեկան իրաւանց օրինագիրք մը՝ «Հուլուքը Այիլէ Քարարնամէսի» (ընտանիքի իրաւանց օրէնք), եւ դատավարական նոր կանոնագիրք մը՝ «Ուսուլը Մուհաքեմաթը Շերիյէ» (դատավարութեան շերիաթական կանոնը), որ բոլոր օսմանցիները կ'ենթարկէր անոր, եւ վերջ կը դնէր կրօնական տարբեր համայնքներու անձնական իրաւանց օրէնքներուն ու դատավարական կանոններուն¹³:

դ- Հակառակ՝ Ա. Աշխարհամարտին մէջ Երիտթուրք կառավարութեան պարտութեան հետեւանքով 1919ին «Ազգային Սահմանադրութեան» կարճատեւ վերականգումին, եւ հակառակ Լոզանի Դաշնագրի յօդուած 42ի տրամադրութեանց, որոնք կը պահանջէին (եւ թուրք պետութիւնը անոնց մէջ կը խոստանար) յարգել ոչ-խալամ փոքրամասնութիւններու ընտանեկան եւ անձնական իրաւանց յատուկ օրէնքները, անոնց սովորութիւններն ու աւանդութիւնները, թուրք պետութիւնը 20 Մարտ 1926ին հրապարակեց քաղաքային օրինագիրք մը, որ բոլոր հպատակները կ'ենթարկէր իրեն եւ վերջնապէս կը թաղէր 1461ին հիմնադրուած համայնքային ինքնավարութեան դրութիւնը հայոց համար:

ե- Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ ժողովուրդը ենթարկուած էր ցեղասպանութեան եւ բռնահանումի, եւ կազմուած էր տարագիր հայութիւնը, որուն մէկ մասը կայք հաստատեց Եւրոպա եւ Ամերիկա, ուր գործադրելի չէր անձնական իրաւանց կարգավիճակը, որովհետեւ եւրոպական եւ ամերիկեան երկիրներու մէջ, եկեղեցին անջատուած էր պետութենէն: Այդ երկիրներուն մէջ եկեղեցին կը ճանչցուի իրրեւ մշակութային կառոյց-օղակ, հետեւաբար եւ եկեղեցական հաստատութեան շուրջ բոլորուած միութիւնները համայնքներ չեն, այլ՝ մշակութային օղակներ, որոնք ենթակայ են այդ երկիրներու ընկերակցութեանց յատուկ օրէնքներուն, իրրեւ պաշտամունքային ընկերակցութիւններ

(Association culturelle), ուր խղճի ազատութեան երաշխաւորութիւնը պետութեան այդ օրէնքներով կ'ապահովուի:

Սակայն, տարագիր հայութեան այն խումբերուն համար, որոնք հաստատուեցան Օսմանեան կայսրութենէն անջատուած արարական երկիրներու մէջ, ուր ծանօթ էր անձնական իրաւանց կարգավիճակը, տարբեր համեմատութիւններով վերականգնուեցաւ այդ կարգավիճակին շնորհած ինքնավարութիւնը¹⁴:

գ- Ֆրանսական հոգատարութեան շրջանին, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ուշագրաւ չափով մը ընդարձակուեցաւ ոչ-խլամ համայնքներու ինքնավարութեան նախկին տարածքը՝ քաղաքական հաշիւներով: Այս ուղղութեամբ առնուած առաջին մեծ քայլը հանդիսացաւ 3 Փետրուար 1930ի օրէնքը, որուն յաջորդեցին 13 Մարտ 1936ի թիւ 60 Լ.Տ.¹⁵ եւ թիւ 61 Լ.Տ., եւ 18 Նոյեմբեր 1938ի թիւ 146 Լ.Տ. որոշումնագրերը, որոնք հիմնարար նշանակութիւն ունեցան կրօնական համայնքներու - հետեւաբար եւ հայ յարանուանութեանց - ունենալիք կարգավիճակը ճշդելու եւ նուիրագործելու տեսակէտէն:

Այս որոշումնագրերէն՝ 13 Մարտի 1936ի թիւ 60 Լ.Տ.-ի յօդուած առաջինը հետեւեալը կը տրամադրէ՝ «Ըստ օրինի կը ճանչցուին՝ որպէս անձնական իրաւունք վայելող համայնքներ, պատմական համայնքները, որոնց կազմակերպութիւնը, իրաւասութիւններն ու կանոնադրութիւնները հաստատուած են նախապէս՝ օրէնսդրական ակտով մը (par un acte législatif)»¹⁶:

Ապա՝ մի առ մի կը թուէ «պատմական համայնքները», որոնց շարքին՝ «Հայ Գրիգորեան-Օրթոտոքս»¹⁷ եւ «Հայ Կաթոլիկ» համայնքները:

18 Նոյեմբեր 1938ին թիւ 146 Լ.Տ. որոշումնագրով ալ կը բարեփոխուի թիւ 60 Լ.Տ. որոշումնագրի 28րդ յօդուածը եւ հոն կ'աւելցուի նաեւ «Բողոքական» համայնքը, որ կ'ընդգրկէ հայ եւ ոչ-հայ աւետարանականները:

Այսպիսով, 20 Մարտ 1928ին Թուրքիոյ հանրապետութեան հրատարակած Քաղաքային Օրինագիրքով թաղուած օրէնսդրական ակտը (Ֆերմանը), կը վերականգնի Լիբանանի մէջ, եւ հիմք կը ծառայէ պետական նոր ճանաչումի մը: Լիբանանի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ Անձնական Իրաւանց Ատեաններու Դատավարութեան Կանոնի Յօդուած Առաջինը կ'ըսէ «Հայց. Եկեղեցիի դատաստանական կազմը ու աստիճանները սահմանուած են՝ 17 Մարտ 1863 թուականի ֆերմանով հաստատուած Ազգ. Սահմանադրութեամբ»¹⁸:

է- Անկախ Լիբանանի 2 Ապրիլ 1951ի Օրէնքը¹⁹ լիբանանահայոց վա-
յելած անձնական իրաւանց կարգավիճակի զարգացման վերջին հանգր-
ուանն ու բարձրակէտը հանդիսացաւ:

Այս օրէնքը ոչ միայն ամրագրեց Ֆրանսական հոգատարութեան
չբջանի իշխանութեանց տուած ճանաչումն ու շնորհած իրաւասու-
թեանց սահմանները, այլեւ դատաստանական լայն իրաւասութիւններ
տուաւ, եւ իր յօդուած 33ով պահանջեց՝ ճանաչում վայելող համայնքնե-
րէն, մէկ տարուան միջոցին, կառավարութեան ներկայացնել իրենց
«Անձնական իրաւանց» եւ «Դատավարութեան» կանոնները, որպէսզի
որդեգրուին պետութեան կողմէ եւ մաս կազմեն լիբանանեան օրէնք-
ներու հաւաքածոյին: Այսինքն, հայերուն կը տրուէր օրէնսդրական բա-
ցարձակ իշխանութիւն մը՝ անձնական իրաւանց մարզին մէջ:

Հայերը ընդհանրապէս, ու լիբանանահայերը՝ մասնաւորաբար, ի-
րաւագիտութեան նայած են արհամարհանքով ու տգիտութեամբ: Ար-
դարեւ, Ներսէս Արք. Մելիք-Թանգեան (1866-1948) կը նշէ՝ թէ «Էջմիած-
նի Սինողը կամ բարձրագոյն խորհրդարանը իւր անգօր, թոյլ, անկա-
նոն կառավարութիւնը շարունակեց մինչեւ ռուսաց՝ մայր աթոռին տի-
րելը: Գլխաւոր ներկայացուցիչ Պասկեիչ, տեսնելով Հայոց Եկեղեցու
անկարգ վիճակը, դիմեց կառավարութեան եւ թոյլտուութիւն ստացաւ
ծրագիր մշակել եւ կանոններ սահմանելու պատրաստութիւններ տես-
նել: Տէրութեան կարգադրութեամբ Պասկեիչը կազմեց ժածուկ յանձ-
նաժողով, որը արդէն պատրաստ էր 1829 թուին եւ կազմուած էր 4 ան-
ձից (գինուորական իշխ. Բեհրուդեան, Սերովբէ վարդապետ, Ջրպետ-
եան եւ Օշկին) եւ հրամայեց ժողովի նիստերը Հայոց Եկեղեցու կանո-
նադրութիւն կազմելու համար բանալ 1830ի Յունուարի 8ին»²⁰:

Իսկ օրէնսդիր Մխիթար Գօշ (1120ականներ-1213)՝ Դատաստանա-
գիրքի նախարանին մէջ, կը գանգատի՝ տիրող ընդհանուր ծուլութենէն,
եւ թէ՛ ոչ ոք կ'աշխատի վարժուիլ օրէնքներուն, որպէսզի ընդունակ ըլ-
լան արդար դատաստան վարելու:

Անկախ Լիբանանի պետութիւնը հայերը ստիպեց՝ որ հայոց Ազգա-
յին Սահմանադրութեան որը մէկ յօդուածէն (յօդուած 47րդ) բխեցնեն
Օրինագիրք մը (անձնական իրաւանց) եւ Կանոնագիրք մը (դատավա-
րութեան), որոնք պետական օրէնքի ոյժ ստացան 11 Հոկտեմբեր
1952ին²¹: Այս երկու կանոնագիրքերը կը կիրարկուին նաեւ Սուրիոյ մէջ:
Անկախութենէն ետք, Սուրիոյ Սահմանադիր Ժողովը մշակեց Սահմա-
նադրական Օրէնք, որ հրապարակուեցաւ Պետութեան Պաշտօնաթեր-
թին մէջ՝ 7 Սեպտեմբեր 1950ին, որուն յօդուած 3ի Դ. պարբերութիւնը

կը նշէ, թէ «Կրօնական համայնքներու անձնական իրաւունքները ճանչցուած են եւ պաշտպանուած պետութեան կողմէ»²²:

Այսինքն, անկախ Սուրիոյ պետութիւնը՝ անձնական իրաւանց մարգրին մէջ, ճանաչում տուած է կրօնական համայնքներու հնուց իվեր վայելած ինքնավարութեան, պահպանելով statu quo ab antiquoն:

ՆԵՐԿԱՅ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Լիբանանի Հանրապետութեան 2 Ապրիլ 1951ի օրէնքը կը սահմանէ քրիստոնեայ եւ իսրայէլեան (մովսիսական) համայնքներու կրօնական իշխանութեանց իրաւասութիւնները: Մանօթանալու համար Լիբանանի հայոց՝ կրօնա-կենցաղային ու կրթական մարզերուն մէջ ներկայիս վայելած ինքնավարութեան, հարկ է ծանօթանալ այս հիմնարար օրէնքի տրամադրութիւններուն²³:

Հիմնարար այդ օրէնքի յօդուած առաջինը կը թուէ այն համայնքները, որոնք կը վայելեն սոյն օրէնքին սահմանած իրաւասութիւնները եւ որոնց շարքին կը յիշէ՝ «Հայ Օրթոտոքս Համայնքը», «Հայ Կաթոլիկ Համայնքը» եւ «Աւետարանական Համայնքը»²⁴:

1951ի Օրէնքի 2րդ, 3րդ, 4րդ, 5րդ, 6րդ, 7րդ եւ 8րդ յօդուածները համայնքներու կրօնական իշխանութեանց կու տան իրաւասութիւններ՝ հետեւեալ մարզերուն մէջ²⁵:-

1. Նշանախօսութիւնը, անոր վաւերականութեան կամ անվաւերութեան հաստատումը, անոր խզումը եւ գրաւականը:
2. Ամուսնութեան դաշինքը, անոր պայմանները եւ ամուսիններու փոխադարձ պարտաւորութիւնները, անոր վաւերականութեան կամ անվաւերութեան հաստատումը, անոր խզումը եւ գրաւականը:
3. Որդիութիւնը, զաւակներու օրինականացումը եւ անոր հետեւանքները, որդեգրութիւնը, ծնողական իշխանութիւնը, եւ զաւակներու խնամքն ու կրթութիւնը մինչեւ անոնց չափահասութեան տարիքը՝ 18 տարիքը լրացուցած:
4. Մննդագրինի յատկացումը՝ ամուսիններու միջեւ, զաւակներու եւ ծնողաց համար:
5. Վնասուց հատուցումի յատկացումը եւ գումարի սահմանումը՝ ամուսնալուծման եւ ամուսնութեան անվաւեր հռչակման պարագաներուն:
6. Անչափահասին խնամակալ անուանելը եւ անոր հաշիւները տեսնելը, ի հարկին խնամակալը պաշտօնանկ ընելը: (Սակայն, եթէ անչափահասին ինչքերու արժէքը անցնի որոշ գումարի մը սահմանները, անհրաժեշտ

կ'ըլլայ մատակարարի մը նշանակումը՝ քաղաքային իրաւասու դատարանին կողմէ, խնամակալին, համայնքապետին, ընդհանուր դատախազին կամ ուրիշ շահագրգիռ կողմի պահանջով):

7. Հաստատումը գուտ բարեսիրական կամ գուտ կրօնական հրիտակեալ ստացուածքներու (վաքըֆ) եւ տնօրինումը անոնց յարակցուող բոլոր հարցերուն:

8. Խիստ ուշագրաւ է Տրդ յօդուածը, որ համայնքի կրօնական իշխանութեան իրաւասութիւն կուտայ՝ կառուցելու եւ մատակարարելու եկեղեցիներ, վանքեր, գերեզմանատուներ, բարեսիրական, կրթական ու դաստիարակչական հաստատութիւններ. եւ ի հարկին՝ յետս կոչելու կամ ջնջելու այդ հաստատութեանց կրօնական հանգամանքը, այսինքն՝ համայնքային հովանաւորութիւնը, որուն շնորհիւ այդ հաստատութիւնները գերծ կը մնան շարք մը տուրքերու եւ հարկերու պարտաւորութենէն:

9. Մինչեւ 23 Յունիս 1959ի Օրէնքին հրատարակութիւնը, Տրդ յօդուածը կրօնական իշխանութեանց կու տար նաեւ՝ հանգուցեայի մը ժառանգութեան հաշուեկշիռը հաստատելու իրաւասութիւնը՝ եթէ ժառանգորդներուն մէջ անչափահաս մը գտնուած ըլլար: Սակայն, յիշեալ օրէնքը այդ իրաւասութիւնը վերագարձուց քաղաքային իրաւասու դատարանին: Նոյնպէս, տարբեր օրէնքներով յետս կոչուեցան շարք մը այլ իրաւասութիւններ (կտակներու յօրինում, փոխանորդագրերու կազմութիւն, եւն.):

10. Կրօնական իշխանութեանց վերապահուած ծիսակատարութեան եւ դատաստանական իրաւասութիւնները պաշտպանուած են ուրիշ համայնքի մը կրօնական իշխանութեան ոտնձգութենէն (յօդուած 14ը ամուսնութիւնը կնքող կրօնական իշխանութեան դատարանին կը վերապահէ անոր քակտումն ու հետեւանքները որոշելու իրաւունքը), նաեւ՝ քաղաքային իշխանութեան ոտնձգութենէն (յօդուած 16ը անվաւեր կը հռչակէ այն ամուսնութիւնը, զոր քրիստոնեայ կամ իսրայէլացի լիրանանցիներ կը կնքեն Լիբանանի մէջ՝ քաղաքային իշխանութեան առջեւ):

11. Տարբեր համայնքներու կամ յարանուանութիւններու միջեւ կնքուելիք խառն ամուսնութեան մը պարագային՝ յօդուած 5ը անձնական իրաւանց կարգավիճակը տնօրինելու իրաւասութիւնը կու տայ ապագայ ամուսինին պատկանած համայնքի կրօնական իշխանութեանց, բացի այն պարագայէն՝ երբ կողմերը գրաւոր համաձայնութեամբ մը որոշած ըլլան ենթարկուիլ ապագայ կնքող համայնքի կանոններուն:

12. Ուսանելի է եւ ուշագրաւ 20րդ յօդուածը, որ եթէ մէկ կողմէ տարամերժօրէն կրօնական իշխանութեանց կը վերապահէ իրաւասութիւնը՝

լուծելու այն վէճերը, որոնք կը ծագին կղերականներու միջեւ ու կը վերաբերին կրօնական համոզումներու կամ՝ կ'առնչուին նուիրապետական իրաւունքներու, պաշտօններու եւ պարտականութիւններու, միւս կողմէ սակայն, պայման կը դնէ՝ որ տարակարծութիւնները լուծող վճիռները, երբ պատիժներ սահմանեն համաձայն կրօնական կանոններու, անգոսնած չըլլան քաղաքային իշխանութեանց իրաւասութիւնները, որոնք ամրագրուած են քաղաքային եւ պատժական օրինագիրքերուն մէջ: Ասոնք գերադաս են եւ կ'առնչուին հանրային կարգ ու կանոնին, եւ կը վերահսկեն խղճի ազատութեան սկզբունքին տրուած մեկնարանութիւններն ու անոր բռնարարումները: Այսինքն՝ պետական օրէնքներն ու դատարաններն են որոնք իրաւասու են մեկնարանելու խղճի ազատութեան սկզբունքը:

13.- Յօդ. 28ը կրօնական իշխանութեանց իրաւասութիւն կու տայ իրենց դատական կոչնագրերու հաղորդման եւ արձակած վճիռներու գործադրութեան համար, դիմելու պետական ոստիկանութեան օժանդակութեան: Պետութեան համապատասխան մարմինները պաշտօն ունին աջակցելու անոնց ամբողջականօրէն, ինչպէս որ պիտի ընէին պետական դատարաններու կոչնագրերու եւ վճիռներու պարագային: Իսկ յօդուած 29ը պետական Գործադիր Դիւանին (Bureau Executif) արձակած վճիռներն ու որոշումները: Այս յօդուածը միաժամանակ պայման կը դնէ որ կրօնական դատարանները իրենց արձակած վճիռներուն ու որոշումներուն բարեփոխումը, անոնց գործադրութեան առկախումը կամ կասեցումը վճռող որոշումը արձակած ըլլան նոյնանման եւ նոյնարժէք վճիռներով կամ որոշումներով, այսինքն նախկիններուն ընդլայն ունենան նորերը: Յօդուած 21ը կը պարտաւորէ պետական Գործադիր Դիւանը եւ Ներքին Ապահովութեան Ուժերու համապատասխան մարմինը գործադրութեան դնելու կրօնական իշխանութեանց տուած «ճամբորդութեան արգելք» ի որոշումը՝ իրենց իրաւասութեանց ենթակայ խրնդիրներու շուրջ բացուած դատի մը կողմերէն մէկուն զէմ՝ մինչեւ այդ դատին աւարտը:

14. 1951ի օրէնքը փոխադարձ պարտաւորութիւններ կը սահմանէ քաղաքային եւ կրօնական դատարաններուն համար, որպէսզի անոնք փոխադարձաբար յարգեն իւրաքանչիւրին իրաւասութիւնները: Այսպէս, յօդուած 22ը պետական դատարաններէն կը պահանջէ յետաձգել իրենց տեսած դատերու դատաւարութիւնը, եթէ միջանկեալ խնդիր մը յարուցուի, որ կը մտնէ կրօնական դատարաններու իրաւասութեանց մէջ,

եւ որուն վճռահատումը անհրաժեշտ գտնուի իրենց տեսած դատին վճռահատումէն առաջ: Միւս կողմէ յօդուած 23ր կրօնական դատարաններէն կը պահանջէ վասն անիրաւասութեան մերժել վարել այն դատերը, որոնք յայտնապէս ենթակայ չեն իրենց իրաւասութեան՝ եթէ նոյնիակ կողմերէն մէկը առարկած չէ անոր դէմ:

15. Օրէնքին 24րդ, 25րդ, 26րդ եւ 27րդ յօդուածները կը սահմանեն պետական վճռարեկ Ատեանի (գերագոյն ատեանի) իրաւասութիւնները՝ կրօնական դատարաններու վերաքննիչ Ատեանին արձակած վճիռներուն կանոնականութեան վրայ հսկելու եւ ի հարկին՝ զանոնք բեկանելու ուղղութեամբ: Պետական վճռարեկ Ատեանը կը վերահսկէ միմիայն դատավարական կանոններու յարգումը կամ խախտումը, եւ իրաւասու չէ քննելու կրօնական վերաքննիչ ատեաններու ըստ էութեան արձակած վճիռներու օրինական կամ ոչ-օրինական ըլլալը, կամ անոնց արդար կամ անարդար ըլլալը: Հոս ուղղահայեաց գիծի վրայ Պետական վճռարեկ Ատեանին ենթակայութիւնը կրօնական դատարաններուն, կը սահմանափակուի դատավարութեան կանոններու ծիրին մէջ միայն:

Լիբանանի Հայոց Գատավարութեան Կանոնի յօդուած 2րդի Գ. պարբերութիւնը ամուսնալուծման եւ ամուսնութեան անվաւերութեան մասին վերաքննիչ Ատեանի արձակած ըստ էութեան վճիռներու օրինական կամ անօրինական ըլլալը քննելու իրաւասութիւնը վերապահած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որպէս դատաստանական բարձրագոյն հեղինակութիւն:

16. Համաձայն յօդուած 31ի տրամադրութեանց, կրօնական իշխանութիւնները՝ օրէնքով իրենց տրուած իրաւասութիւնները կրնան կիրարկել բացառաբար՝ իրենց ենթակայ անդամներուն վրայ, այսինքն՝ համայնքի զաւակներուն վրայ միայն:

17. Ըստ յօդուած 30ի տրամադրութեանց, այն վճիռները, որոնք կը վերաբերին կրօնական իշխանութեանց իրաւասութեան, բայց որոնք տրուած են Լիբանանէն դուրս նոյն համայնքի կրօնական դատարաններուն կողմէ, Լիբանանի մէջ գործադրելիութեան ոյժ կրնան ստանալ բացառաբար միեւնոյն համայնքի իշխանութիւններուն կողմէ, եւ ոչ թէ քաղաքային դատարաններու:

Ասոնք են Լիբանանի Հայոց կրօնական իշխանութեանց վայելած իրաւասութիւնները, որոնց ամբողջութիւնը կը կոչուի «Անձնական Իրաւանց Ինքնավարութեան Կարգավիճակ»: Համայնքներուն տրուած կրօնամշակութային այս իրաւունքներու սկզբունքը ներհակ է պետու-

թեան գերիշխանութեան անբաժանելիութեան (անտրոհելիութեան) եւ անփոխանցելիութեան (անօտարելիութեան) հիմնական սկզբունքին:

Կրօնա-կենցաղային ինքնավարութեան այս եզակի կարգավիճակը իր ամէնէն աւարտուն տարագումով, Լիբանանի մէջ կը կիրարկուի ամբողջական ձեւով, եւ՝ Սուրիոյ ու Կիպրոսի մէջ, մասնակիօրէն: Լիբանանի մէջ ասոր կիրարկումը կը զգենու կրկնակիօրէն եզակի կարելութիւն, նաեւ այն յաւելեալ պատճառով՝ որ Լիբանան, ի տարբերութիւն Սուրիոյ եւ Կիպրոսի, բաղկացած է բազմաթիւ՝ 18 համայնքներէ, որոնց բոլորը եւ անոնցմէ իւրաքանչիւրը՝ հաւասարապէս, կը համարուին փոքրամասնութիւններ՝ անխտիր, առանց նկատի ունենալու համայնքներուն պատկանող անձերու թուաքանակը: Այս եզակի համակարգը կը կոչուի համայնքներու համընկերակցութիւն (Systeme consociatif des communautes): Այս համակարգին եզակիութիւնը կը կայանայ նաեւ այն իրողութեան մէջ, որ բացի կրօնա-կենցաղային ինքնավարութենէն իւրաքանչիւր համայնքի վերապահուած են երեսփոխանական եւ նախարարական աթոռներ՝ իրենց ներկայացուցած թուաքանակին համեմատութեամբ: Իւրաքանչիւր համայնքի համար սահմանուած է աթոռներու քոթա մը՝ համեմատականի-համամասնականի սկզբունքով, ոչ՝ մեծամասնականի: Իսկ բազմատարր հասարակութեան մը մէջ, ինչպէս յիշանանեանք, համեմատականի սկզբունքին ստեղծած մասնակցական դեմոկրատիան (Democratie de participation, Power sharing

المشاركة), իւրաքանչիւր համայնքի իրաւունք կու տայ մասնակցելու իշխանութեան: Մինչդեռ մեծամասնականի սկզբունքին ստեղծելիք մրցակցական դեմոկրատիան (Democratie competitive, Winner takes all ديموقراطية الاكثرية) պիտի զրկէր փոքրաթիւ համայնքները՝ իշխանութեան մասնակցելու յոյսէն անգամ...: Հետեւաբար, ամբողջ գաղթաշխարհին մէջ, միմիայն Մերձաւոր Արեւելքի հայերն են որ կը վայելեն այս եզակի իրաւավիճակը՝ հայրենամերձ այս տարածքներուն մէջ, եւ կը հանդիսանան հայապահպանումի միջնաբերդ գաղութները: Այս գաղութներուն տրուած միջնաբերդի հանգամանքը՝ ուրեմն, հիմնուած է տարբեր հայազաղութներու վայելած ու չվայելած իրաւավիճակներուն սերտողութեան վրայ, եւ բնաւ հետեւանքը չէ՝ տեղայնական մտայնութեան կամ նեղմտութեան:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Պետութեան գերիշխանութեան անբաժանելիութեան եւ անփոխանցելիութեան սկզբունքէն մեծ շեղում կատարած յիշանանեան բազ-

մահամայնքային դրուժիւնը կարելի չէ օրինակելի դրուժիւն մը համարել՝ ոչ Հայաստանի Հանրապետութեան եւ ոչ ալ այլ երկրի մը համար: Մինչ Հայաստան ազգային գրեթէ միատարր պետութիւն մըն է, Լիբանան փոքրամասնական համայնքներու համընկերակցութիւն (systeme consociatif) մըն է, որուն մէջ կարելի չէ խօսիլ ներազգային միասնութեան մասին, քանի որ համայնքի մը անդամին առաջնահերթ կապուածութիւնը (allégeance primordiale) իր համայնքին հետ է, ինչ որ հերթական միջ-համայնքային «եղբայրասպան» կռիւներու առաջնորդած է, ինչպէս 1958ի եւ 1975-1990 քաղաքացիական պատերազմի տարրեր փութրուն²⁶: Այս ալլազան համայնքները կը պարզեն նաեւ մշակոյթներու ալլազանութեան պատկեր մը, որ կրնայ վերածիլ մշակութային հարստութեան՝ եթէ այդ մշակոյթները սերտաճին իրարու հետ ընդելուզումի ճամբով, դուրս գալով իրենց կեթթօներէն, ու եթէ չվերածուին հակամարտ քաղաքական միաւորներու, ինչպէս նաեւ եթէ կարենան կառչած մնալ փոխադարձ հանդուրժողութեան իմաստութեան, որ խանձարուրն էր անձնական իրաւանց այս կարգավիճակին:

2.- Լիբանանեան այս եզակի դրութեան մէջ, խղճի ազատութեան ալլապէս դրական ու մարդկայնական սկզբունքը չափազանցօրէն իտէ-ալականացուած է՝ դառնալով բացարձակ արժէք, սահմանափակելով պետութեան գերիշխանութիւնը ոչ միայն կրօնա-կենցաղային ու կրթական մարզերուն մէջ, այլեւ՝ քաղաքական: Այդպիսով ծնունդ տրուած է «քաղաքական համայնքայնութիւն» կոչուող դրոյթին, որ կ'արգելակէ պետութեան բարեկարգումի փորձերը եւ կը զօրացնէ համայնքները, որոնց շարքին նաեւ՝ հայ համայնքները: Արդարեւ, կրօնական իշխանութեանց տրուած չափազանցեալ ազատութիւնը անկարելի կը դարձնէ ոչ միայն ընդելուզումի կարգով լիբանանցիներու համարկումը որպէս ազգային հաւաքականութիւն, այլեւ՝ լայնածիր ժողովրդավարութեան կիրարկումը հոն²⁷:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Ներկայացուած Ս. Էջմիածնի մէջ, 1-3 Նոյեմբեր 2001ին «Եկեղեցի-Պետութիւն» նիւթով կայացած իրաւարաններու միջազգային գիտաժողովին, Անկլիբան, Լուտերական եւ Կաթողիկէ Եկեղեցիներու ներկայացուցիչներու կողքին, ներկայացնելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Այս ուսումնասիրութեան համար օգտագործուած են հետեւեալ նիւթերը: Արշակ Այլօյաճեան, *Ազգ. Մահամայնակութիւն*, Գ. Տէրտէրեան, «Լիբանանի Բազմահամայնքային Համակարգը եւ լիբանանահայութեան իրաւավիճակը» (անտիպ), Meline Topakian, *Le Statut Familial de la Communauté Arménienne*

Orthodoxe au Liban, Edmond Rabbath, *La Formation Historique du Liban Politique et Constitutuinnelle*, 1973, George Young, *Corps de Droit Ottoman*, Vol. 2, The Clarendon Press Oxford, 1905, Pierre Ghannage, *L'Etat Face au Pluralisme des Statuts Familiaux au Liban*, 1970, Pierre Rondot, *Les Communautés Confessionnelles du Liban*, Paris, 1983, Samir Khalaf, "Primordial Ties and Politics in Lebanon", *Middle Eastern Studies*, Vol. 4, 1968, Clifford Geertz, "The Integrative Revolution: Primordial Sentiments and Civil Politics in the New States", *Old Societies and New States*, Free Press, Glenside, 1965, *Religious Groups and Citizens (Manner of Option) Law*, Nicosia, 1961, *Courts of Justice Law*, Nicosia, 1961, Eras Uras, *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi*, Istanbul, 1988

գիրքերը եւ ուրիշներ:

- ² Լէօ, *Երկերի ժողովածու*, Հտր. 2, Հայաստան Հրատարակչութիւն, Երեւան, 1967:
- ³ Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգայատոււմ*, Հտր. Ա., Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2001:
- ⁴ Լէօ, էջ 309, Օրմանեան գլ. 582:
- ⁵ Լէօ, էջ 379-80, 456:
- ⁶ Արշաւանք Արարաց Ի Հայս Արարեայ Ղեւոնդ Վարդապետայ Հայոց, Փարիզ, 1859, էջ 143:
- ⁷ Աւելի մանրամասն տե՛ս՝ Հ. Ղազարեան, *Արեւմտահայերի Սոցիալ-Տնտեսական եւ Քաղաքական Կացութիւնը 1800-1870 թ.թ.*, Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, Երեւան, 1967, էջ 130-139, 341-369, 446-484:
- ⁸ Անոր սերտողութիւնը մաս չի կազմեր ներկայ նիւթին:
- ⁹ Տրւսթուր Ա. շարք, Հատոր 2, «Նիզամմամտ»ի բաժինին մէջ, էջ 938-968:
- ¹⁰ Այստեղ, 1863ի «Ազգային Սահմանադրութիւն» կոչուող կանոնադրութեան քննարկումը մաս չի կազմեր մեր այս նիւթին:
- ¹¹ Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Տպ. «Հրազդան», Պէյրութ, 1931, նաեւ՝ Կարդացէք եւ Սոյրեցէք ժողովուրդին եւ Ազգային Վարչութեան Իրաւասութիւնները Ազգային Սահմանադրութիւն Հայոց, 1908, Տպագր. Չարեհ Ն. Պէրպէրեան, նաեւ՝ Մ. Հերարդեան, *Ազգային Սահմանադրութիւն*, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1959:
- ¹² Տրւսթուր, Բ. շարք, Հտր. 9, էջ 762-794:
- ¹³ Աւելի մանրամասն տե՛ս՝ Չաւէն Արքեպիսկոպոս, *Պատրիարքական Թուշերս. Վաւերագիրեր եւ Վկայութիւններ*, Տպարան Նոր Աստղ, Գահիրէ, 1947, էջ 187-196:
- ¹⁴ Միջին Արեւելքի (ներառեալ Կիպրոսի ու Իրանի) հայազաղութներու կարգավիճակներու բաղդատական ուսումնասիրութիւնը դուրս կը մնայ մեր նիւթի սահմաններէն պիտի կեդրոնանանք իրանանահայութեան պատմականօրէն ժառանգած կարգավիճակին վրայ (հայազաղութներու իրաւավիճակներու բաղդատական ուսումնասիրութեան առաջին փորձի մը մասին տեսնել՝ Թ. Երթաս Հայ Սփիւռք, Խմբ. Գ. Տէրաէրեան, Պէյրութ, 1988, էջ 84-100, Գիրքը կ'ամփոփէ Հայէպի մէջ կայացած «Ապրիլեան Սեմինար Ա.»ի նիւթերը):
- ¹⁵ Հաւանարար՝ Republique Libanaise:
- ¹⁶ Կ. Իզմիրլեան, *Լիբանանի Հայոց Անձնական Իրաւունքը*, «Յառաջարան», Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1956, նաեւ՝ مجموعة التشريعات اللبنانية, الجزء الاول (أب), القسم الاول, ص 227-241, قانون الأحوال الشخصية, ص 251-242.

أصول المحاكمات المذهبية لطائفة الأرمن الأرثوذكس في لبنان.

مجموعة القوانين والقرارات الإدارية للنزعة السورية (الجزء الثالث نظام الطوائف الدينية)، مطبعة الشعب، دمشق (صاحبها محمد توفيق جانا).

¹⁷ «Հայ Գրիգորեան-Օրթոդոքս» յորջորջուած ֆրանսական հոգատար իշխանութեանց կողմէ, որդեգրելով Վատիկանի սխալ տեսակէտը՝ Հայց Եկեղեցիի ոչ-առաքելական ըլլալուն մասին:

¹⁸ Իզմիրլեան, «Յառաջարան», նաեւ՝

نستور الكنيسة الارمنية، مقدمة الدكتور المحامي روبيين بوغوصيان، ترجمة الدكتور خشادور قصابيان، دمشق 1998.

¹⁹ Իզմիրլեան, «Յառաջարան»:

²⁰ Ն. Վ. Մելիք Թանգեան, Հայոց Եկեղեցական Իրաւունքը, Ա. եւ Բ. Գիրք, Հրատարակութիւն Թ-Հ-Թ. Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի, Թեհրան, 2004, էջ 595:

²¹ Իզմիրլեան, «Յառաջարան», նաեւ՝

حنا مالك، الاحوال الشخصية ومحاكمها للطوائف المسيحية في سوريا ولبنان، بيروت 1987.

²² النستور (العثماني)، ترجمة نوفل نعمة الله نوفل (مراجعة وتقيق خليل باشكاتب كمارك عربستان سابقاً ومدير مطبوعات ولاية سوريا)، المجلد الثاني، المطبعة الادبية، بيروت، سنة 1301 للهجرة.

²³ Նիւթին անմիջական սահմանէն դուրս կը մնայ նաեւ Լիբանանի Հայոց վայելած քաղաքական առանձնաշնորհումին հարցը, որ կ'իյնայ՝ Լիբանանի բազմահամայնքային համակարգի ուսումնասիրման ծիրին մէջ (այս մասին՝ Գ. Տէրտէրեան, «Լիբանանի Բազմահամայնքային Համակարգը Եւ Լիբանանահայութեան Իրավիճակը» (անտիպ)):

²⁴ Որ ինչպէս նշեցինք կ'ընդգրկէ Հայ եւ ոչ-Հայ աւետարանականները:

²⁵ Իզմիրլեան, «Յառաջարան»: էջ 1-4:

²⁶ Քաղաքացիական այդ կռիւները ունէին այլ գործօններ եւս, ինչպէս՝ օտար պետութիւններու քաջալերանքը: Արդարեւ, անոնք հովանաւորած եւ իրենց պահեստի ոյժին վերածած են՝ փոքրամասնութիւններ ներկայացնող լիբանանեան բոլոր համայնքները, առանց բացառութեան:

²⁷ «Խղճի ազատութիւն»ը, ինչպէս միւս սկզբունքները՝ անկախութիւն, մարդու իրաւունքներ եւն., իւրաքանչիւր երկրի մէջ կիրարկելու համար հարկ է որ ստանան այդ երկրին յատուկ եւ շօշափելիօրէն յարմար տարազում մը: Այդ սկզբունքներու in abstracto կիրարկումը կ'ունենայ աղիտալի հետեւանքներ երկրին համար: Այդ սկզբունքներու in concreto կիրարկումն է միայն որ կրնայ տալ զրական արդիւնքներ երկրին համար:

Փակագիծ մը բանալով հարկ է պնդել թէ, խղճի ազատութեան սկզբունքին Հայաստանի մէջ կիրառումը հարկ է որ նկատի առնէ թէ՛ երկրի բնակչութեան մեծամասնութեան միատարրութիւնը, եւ թէ՛ Հայաստանեայց Եկեղեցիին խաղացած դերը, Հայութեան պետականագրկութեան դարերու երկայնքին, որպէս «ազգային եկեղեցի»: Խղճի ազատութեան in concreto կիրարկումը Հայաստանի մէջ, գերադաս գիրք մը կու տայ Հայաստանեայց Եկեղեցիին՝ միւս բոլոր կրօնական խումբերուն, յարանուանութեանց թէ՛ ազանդներուն նկատմամբ: Պայման է սակայն, որ Հայաստանեայց Եկեղեցին ձեռնարկէ համակողմանի այժմէականացումի բարեկարգութեան մը, որպէսզի կարողանայ հոգեհարազատանալ ժողովուրդին հետ, եւ որպէսզի կարողանայ ժողովուրդին փոխանցել հոգեւոր այն սնունդը, որով ան պիտի դիմադրէ՝ ներկայի դրա-

մատրութեան համաշխարհայնացումին ապագայնացնող եւ անմարդկայնացնող ճշումներուն ու փորձութիւններուն:

Հետեւաբար, Հայաստանի պետական պատասխանատուները՝ պետութիւն-եկեղեցի յարաբերութեանց սահմանագծումի ծիրին մէջ, հարազատ պէտք է մնան «ազգ»ի հայկական (արեւելեան) սահմանումին, որ պատմութեան, լեզուի, մշակոյթի եւ հայրենիքի ընդհանրութիւնը հիմք կ'ընդունի, քան թէ հետեւին Արեւմուտքի «ազգ-պետութիւն» (Etat-Nation, Nation-State) հասկացութեան, որ խորթ է եւ օտար հայութեան ինքնութեան: Համաշխարհայնացումի ազգաջինջ գաղափարախօսական արշաւին դէմ Հայաստանի պետութիւնը պարտի կառչած մնալ հայութեան երեքհազարամեայ ինքնութեան եւ «ազգ»ի գաղափարաբանութեան, մերժելով «քաղաքացիութեան իրաւունք» տալ «խղճի ազատութեան» պատրուակով, մարդկայնական խղճմտանքին ներհակ ու խորթ Արեւմուտքի աղանդներու՝ արգիլելու համար խղճի ազատութեան չարաշահումը: Արդարեւ, Արեւելքէն բխած են բոլոր կրօնական դպրոցները, իսկ թոնդրակեցիներու - որոնք ռահվիրաներն էին Հայկական վերածնունդին (Renaissance) - պաշպանած կարգ մը սկզբունքները մեր կարծիքով, ուսանելի են այսօր՝ վերեւ յիշուած եկեղեցական բարեկարգութեան համար: Հարցը՝ ուրեմն, մեր անցեալի ժառանգութեան սերտողութեան մէջ կը կայանայ ժառանգութիւն մը՝ որ մեծապէս ուսանելի է եւ օգտադործելի: Օրինակի համար, այսօր արդիական ու եւրոպական համարուած Régime de Communauté des Biensի (այլ ու կնոջ ինչքերու հասարակաց սեփականութեան կարգի) նախատիպարը մենք կը գտնենք Շահապիվանի ժողովի (455թ.) որդեգրած 3րդ կանոնին մէջ, որ կը տրամադրէ՝ «Եթէ մարդը շնաբարոյ է, եւ կ'արձակէ իր կինը՝ առանց պոռնկութեան պատճառի կամ մարմնական արատի, կինը իրատունք ունի հետը տանելու մարդուն շարժական եւ անշարժ բոլոր ստացուածքի կէսը, նոյնիսկ զաւակներուն (եւ կենդանիներուն) կէսը»: Այլ խօսքով, Եւրոպայէն 15 դար առաջ հայ ժողովուրդին վաղուց ծանօթ է եղած այլ ու կնոջ ինչքերու հասարակաց (համայնական) սեփականութեան յառաջադէմ կարգը...:

THE PERSONAL RIGHTS CODE OF THE LEBANESE ARMENIANS
FROM THE PERSPECTIVE OF STATE-VERSUS-CHURCH RELATIONS

(Summary)

KASBAR DERDERIAN

The author delves into history and puts the personal rights code of the Lebanese Armenians in the framework of the state-versus-communities relationship. He assesses the advantages of such a system for the communities as well as its disadvantages to the sovereignty of the state, since it is incompatible with the principle of state sovereignty.

The author sees these rights as the practical outcome of the very first Moslem Arab conquests, whereby the Moslem Arab conqueror and the non-Moslem vanquished had to live within the boundaries of the same country. Such a cohabitation, however, necessitated the establishment of a *modus vivendi*.

This cohabitation was bound by Islam, which rejected forceful islamization of Christians and Jews. It was a political necessity, too, since in order to win over the population, Islam tolerated Oriental Christian Churches which were persecuted by the Byzantine Empire. Furthermore, the conquerors needed the natives' know-how, handlabor, economic produce and taxes.

The author identifies several treaties signed between the invading Moslem armies and Christian Armenian cities and towns as he examines the relationship between the Moslem rulers and the non-Moslem natives. He notes, however, that it was with the establishment of the Armenian Patriarchate of Constantinople (Istanbul) in 1461 that the Armenian Church and its state relations attained their legal and stable shape. Indeed, Fatih Sultan Mehmet II appointed Archbishop Hovagim Patriarch of all Armenians of the Empire and granted recognition to the Armenians, incorporating them - like the Greeks and the Jews - into the *millet* system. Later on, in 1831, the Armenian Catholics were incorporated too, as were the Protestants (of diverse ethnicities) in 1846.

Concurrently, in 1836, religious-administrative entitlements, called *Bolojenya*, were granted to the Catholicosate of Echmiadzin, which was under Russian rule.

After the Armenian genocide, specifically on March 20, 1926 under the Turkish state civil code, the *millet* system was abolished.

The genocide survivors who settled in the West were subjected to the civil code of their adopted countries, since the church was separated from the state in those countries. However, those who settled in Arab countries had their communal rights code restored based on the ottoman *millet* system.

Accordingly, the Ottoman personal codes of the Orthodox Armenians (as well as the Catholic Armenians and Protestants) were used in Lebanon as a base for a similar new code.